

7.

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
PHILOSOPHY
ФИЛОСОФСКИЕ НАУКИ

**ԹԵՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՅԱԿՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

Հ. Գ. ՂԱԶՈՅԱՆ
Փիլ. գիտ. թեկնածու

Ավ. Իսահակյանը փիլիսոփայող, փիլիսոփայության հարգմ իմացող բանաստեղծ էր և բնականաբար փիլիսոփայական գաղափարները որոշակի դեր են խաղացել նրա աշխարհայացքի և գեղագիտական սկզբունքների ձևավորման վրա: Նրա ըմբռնմամբ փիլիսոփայությունը աշխարհը ճանաչելու և ճշմարտությանը հասնելու արվեստ է, և պաշտպանում էր արվեստի ու փիլիսոփայության միասնության գաղափարը, կարծելով, որ դրանք տարբեր ձևերով լուծում են միանման խնդիրներ, հատկապես եթե խոսքը վերաբերում է մարդու կեցությանը, իմացությանը և աշխարհայացքին: Դեռևս վաղ տարիքում Հիշատակարանում գրում է «... նտածող մարդու համար երջանկությունը ճշմարտություն գտնելն է...»¹: Միաժամանակ նկատում է, որ ճշմարտության որոնումը անընդհատ ընթացք է, դրա համար էլ « ... որքան ճշմարտություններ է գտնում, այնքան հանգստանում և նույնքան էլ անհանգստանում է նոր հարցերի ցանցի մեջ»²: Հասուն տարիքում նկատում է, որ եթե ճշմարտությանը մոտենում ենք արժեքային տեսանկյունից, ապա այն ծեռքը է բերվում և հաստատվում երկար տարիների ընթացքում, այն չի տրվում միանգամից: Նա հանգում է այն մտքին, որ ճշմարտության հաղթանակը լինում է փուլերով, քանի որ ճշմարտությունը կարող է թաքնված լինել: Իսահակյանը, արժենորելով ճշմարտության կարևորությունն ու նշանակությունը դրա նպատակի տեսանկյունից, գտնում է, որ ճշմարտությունը պետք է ուղղված լինի որևէ խնդրի լուծման, մասնավորապես՝ մարդկությանը երջանկության հասցնելու համար ուղիների որոնմանը: Այս առումով պատահական չէ, որ ճշմարտության որոնումը նա տեսնում է մարդկության բազմադարյան պատմության ընթացքում եղած փիլիսոփայական, քաղաքական ուսմունքների, հոսանքների ուսումնասիրության մեջ ու ճշմարտության բացահայտումը՝ վերջինիս միջոցով: Նա ուսումնասիրել է փիլիսոփայական ու քաղաքական տարբեր,

¹ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 173:

² Նույն տեղում:

բազմաթիվ, երբեմն իրարամերժ ուղղություններ ու հսանքներ և այդ առումով նշել է, որ ծշմարտությանը հասու լինելու համար հակասական ճանապարհներով է անցել, թերևս նպատակը մեկն է եղել. աշխարհում չարիքի վերացումը, դրա արմատները գտնելը. « Ինչո՞ւ չեմ տարվել, ի՞ նչ փիլսոփիայական, էտիկական, հասարակագիտական սիստեմներով՝ ազատագրելու տառապող մարդկությանը»³:

Իսահակյանին բնորոշ է այն, որ ծշմարտության որոնման ճանապարհին հասարակության փրկության առաքելությունը ոչ մի փիլսոփիայական համակարգի և քաղաքական ուղղության մեջնաշնորհ չի համարել: Գրականագետ Ս. Սարինյանը նշում է. « Ճին, փիլսոփիա արևելքի մարդիկ խորհրդածել են կյանքի առեղծվածի ու գոյության իմաստի մասին, որոնել ծշմարտությունը: Ավ. Իսահակյանը լսում է դարերի ձայնը և ավանդական իմաստությունների մեջ ստուգում իր ժամանակի ծշմարտությունը»⁴: Իսահակյանը տարանջատում է ծշմարտության ոլորտները գիտության մեջ և արվեստում, բայց իմնական ծանրությունն ու բարդությունը տեսնում է հասարակական կյանքում, մարդու կեցության ոլորտում և կարևորում է հատկապես այս ոլորտը: Այս նկատառումներով նա ծշմարտության որոնման երկու ճանապարհ նկատում. մի դեպքում անընդհատ, մշտական լինել մարդկանց մեջ, թափառել, ուսումնասիրել, դիտել, տեսնել: Մյուս կողմից էլ նկատել է, որ ծշմարտությանը հասու լինելու համար որոշ ժամանակ ու « հեռավորություն » է անհրաժեշտ, որ այն հեշտությամբ չի տրվում, կան խաթարողներ ու խանգարողներ, որ ամենօրյա թոհութոիի մեջ ծշմարտությունը կարող է ի հայտ չգալ, ուստի անհրաժեշտություն է զգում հեռանալու « ... ամենալուր, ամենահեռու մի վայր, մի քարայր՝ հանգիստ, անդորր, և մնամ այնտեղ տարիներ,... ու խորհեն երկարորեն, անընդհատ, և գտնեն ծշմարտությունը»⁵:

Այստեղ անշուշտ զգացվում է բուդյայականության ազդեցությունը: Ընդհանուր առմանք ծշմարտության փնտրութքը Իսահակյանի համար դաշնում է դավանանք, կյանքի նպատակ ու իմնական գործը:

**Ես քեզ եմ փնտրել իմ կյանքի շեմքից,
Եվ տես, քարացա անհուն տանջանքում...**

1940-ական թվականներին խորհրդային գաղափարախոսության տեսանկյունից Իսահակյանին ներկայացվում էր հետևյալ մեղադրանքը. « Ակնհայտ է, որ պոետն իր որոնած ծշմարտությունը գտնելու, նրան հասնելու անհուսալի և անորոշ ուղու վրա էր կանգնած... նրան թվում էր թե « էլ չմնաց մի ուղի անհայտ », որով կարելի լիներ հասնել ու բերել « մեծ ծշմարտությունը »... Իսահակյանը նի պահ թողնում է ծշմարտության ապարդյուն որոնումները և տոգորված « անհուն վրեժի և ատելության » կրակով, սոցիալական կրվի մարտակոչ է հնչեցնում... »⁶:

Ուսումնասիրելով Իսահակյանի ստեղծագործությունները՝ նկատում ենք, որ նա երբեք չի դադարեցրել ծշմարտության որոնումները: Իբրև իրատես ու խորինաստ մտածող՝ նա նկատում է, որ մարդ արարածին բնորոշ է ստելու, խարելու

³ **Ավ. Իսահակյան**, Երկերի ժողովածու, 5 հ., Երևան, 1977, էջ 312:

⁴ Պատմա-քանասիրական հանդես, Երևան, 1975, էջ 38:

⁵ Հիշատակարան, էջ 335:

⁶ **Ա. Ա. Ասատրյան**, Ավ. Իսահակյանի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1940, էջ 16:

հատկությունը, ընդ որում՝ նա կարող է խաբել և այլոց, և անգամ ինքն իրեն: ճշ-
մարտությանը զուգահեռ հասարակական հարաբերություններում առկա է
սուտն ու խաբեությունը, որը պոետի կարծիքով տանում է դեպի մոլորություն.

Տե՛ս, սըտության մեջ, մոլորության մեջ ջախջախվեց կյանքը... ու դու չե՞ս գըթա:

Սուտն ու ճշմարիտը այսպիսով կողք կողքի են, և Խսահակյանի մոտ ձևավոր-
վում է այն միտքը, որ սուտը հենց ճշմարտության գոյության արդյունք է: Սուտն
է դաշնում այն իհնքը, որի վրա էլ ինքը իրեն մերժում է, որի հետևանքով ի հայտ
է գալիս ճշմարտությունը:

Ճշմարտության ու ստի հակադրությունը հստակ արտահայտված է «Աբու-Լա-
լա Մահարի» պոեմում, որտեղ մարդկային հոգում հազար «զագիր ու նանիր»,
«գարշանք ու նողկում» հաշված բանաստեղծը «հազար ու մեկերորդը» առավել
է ատում, որն էլ կեղծիքն է հոգու: Զարմացած բանականություն ունեցող, խոսք
ու լեզու ստեղծած մարդ արարածի վրա, միաժամանակ զայրացած հարցնում է
«ոգե՞լ ես արդյոք ճշմարիտ մի բառ»: Արդարության և բարոյականության չափա-
նիշի դերում Խսահակյանը ցանկանում էր տեսնել միայն ճշմարտությունը, մինչ-
դեռ նկատում է, որ այդ դերը ստանձնում է սուտը, ապա այսպիսին է դաշնում
հասարակությունը.

**Ապիկար աշխարհ, ուր հզոր ոսկին
դարձնում է գողին՝ ազնիվ բարեհույս,
Ապուշին հանճար, վախսկոտին կտրիծ,
տգեղին՝ չքնաղ և պոռնիկին՝ կույս:**

Սա պատմական, սոցիալ-քաղաքական մի ողջ ժամանակահատվածին բնո-
րոշ երևույթ է: Նա ընդգծում է, որ մարդը ճշմարիտի և ստի հարաբերակցությամբ
է արժնորում ժամանակի բնորոշը: ճշմարիտի և ստի հարաբերակցությունը հան-
դես է գալիս ժամանակի բարերօք ընդհանրացնող հայտարարի դերում: Խսա-
հակյանի կարծիքով սուտը հասարակության մեջ խորհրդանշում է անարդարու-
թյունը, անբարոյականը, չարը, վատը և ստի միջոցով իրականացվում են իրա-
վունքներ ու կատարվում պարտականությունները: Սուտը, իր ոլորտն ընդլայնե-
լով, խլում է ճշմարիտի ընդգրկման ոլորտը, նվազեցնում նրա սահմանները: Այդ-
պիսի հասարակական հարաբերություններում անհատը չի խորշում, անբարոյա-
կան չի համարում կեղծելը, խարելը և սա հարվածում է մարդկային արժանա-
պատվությանն ու հպարտությանը, ստորացնում է արդարության օրենքներով
ապրող մարդուն.

**Ի՞նչ օրի հասա, սև օրի հասա,
Որ ստոր մարդուն գլուխ ծռեցի,
Գլուխը չըլիմեր ուսերիս վրա
Քան թե տմարդին գլուխ ծռեցի:**

Խսահակյանը նկատում է, որ սուտը դաշնում է սովորույթ, որի ձևավորումը
տեղի է ունենում որոշակի միջավայրում: Միջավայրը կարող է և հանդուրժել, և
ատել սուտը, կամ էլ խոչընդոտել ստի ու կեղծիքի տարածմանը: Չխարող, չս-
տող մարդուն նա երջանիկ մարդ է համարում, վկայակոչելով հասարակական
կարծիքը՝ «Երնեկ իրեն, երջանիկ մարդ է, արդար հզի ունի»⁷: Բայց նկատել է

⁷ Ավ. Խսահակյան, հ.4. էջ 220:

նաև, որ արդարախոսությունն ու ծշմարտությունը երբեմն պատշաճ չեն գնահատվում, որքանով հասարակության մեջ տարբեր խավեր ու խմբեր և անհատներ ունեն տարբեր շահեր ու նկրտումներ, և «Ուստա Կարո» վեպում գրում է. «Նրա ծշմարտությունը և արդարասիրությունը այն աստիճան անկաշառելի էր, որ գյուղացիք նրան երբեք չէին կանչում դատարանի առջև... ծշմարտությունը հաճախ նպաստավոր չէր լինում վկա հրավիրվողների գործին: Մորթեիր, նույնիսկ բարեկամի համար սուստ վկայություն չէր տա»⁸:

Ծշմարտության վեր հանճան գլխավոր պայմանը ազատությունն է, առանց որի հնարավոր չէ ստի հերթումը, դրա համար էլ ծշմարտության կանխման հետևյալ մերողն է գործում.

**Զեռ ու սոսս կապեցին,
Բանտը դրին, կողպեցին,
Ո՛չ թողեցին գանգատվիմ,
Ո՛չ էլ լեզուս կըտրեցին:**

Ծշմարտությունը, ըստ Խսահակյանի, վերացական չէ, այն կոնկրետ է և մարդու ճակատագրից ու ապրելակերպից հեռու չէ, ցանկալի է այդ ծշմարտությունը, թե ոչ, այնուհամդերձ այն թե՛ մարդկությանը, թե՛ առանձին անհատին հոգեհարազատ է: Այն սոցիալ- բարոյական այնպիսի արժեք է, որն ունի հավերժական պաշտամունքի վերածնան միտվածություն: Սուտը գունազարդվում է, ծշմարտությունը գունազարդման կարիք չունի, հենց այդ պատճառով էլ այն շաղկապում է այլ արժեքների հետ՝ որպես դրանց ամբողջական կազմավորման հիմք, դառնում է դրանց ձևավորման ու գործունեության որոշիչ դեր ունեցող գործոն.

ԵՎ ՔՐ ՔԱՐԱԳԱԾ ՔՉՈՒՆՑՔՐՈՒՄ ԻԻՄ ԵՍ ՍՈՒՐԵՆ ԵՄ ԴՆՈՒՄ ԱՀԵԼ ԾՇՄԱՐՏԻ:

Ծշմարտությունը քանկարժեք է, այն հզոր ուժ է, անգամ ունի սրի արժեք: Ծշմարտությունը «քիկնապահների» կարիք ունի, քանզի այն պահպանելու համար երբեմն թանկ են վճարում, անզամ՝ կյանքի գնով և դա լավ է երևում «ժողովրդի քնարը» բալլադում, որում մի կողմից առաջարկվում է /թուրք փաշա/ ստի դեմ ստով կարգախոսը, մյուս կողմից էլ՝ ստի դեմ միայն ծշմարիտը կարգախոսը / գուսան Միրկո/.

**Ո՛Վ ԱՐԻԿԱՆԵՐ, ՃԻՎԱԴ, ՄՈՄԱՐԴԻ,
ՄՈՐԹԵՑԵՌ, ԼԱՎԻՌ ԱՎԵԼ, ԱՌԱՎԵԼ,
ՍԱԼԿԱՅՆ ԻՄԱՑԵՌ,
ՈՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՔՆԱՐԸ ԵՐԲԵՔ
ՉԻ ԿԱՐՈՊ ԱՄԵԼ...**

Խսահակյանը ընդգծում է, որ սուտը շոշափելի է, տեսանելի, ակնառու և չգնաց ծշմարտությունը թաքցնելու և սուտը գունազարդելու ճանապարհով, անգամ որդիներին փրկելու հեռանկարով.

ՉԵՆ ԻՆԱԳԱՆԴՎՈՒՄ ԽՈՍՔԵՐԸ ԱՐՄԻՆ ԵՎ ԿՈԿՈՐԴԻ ՄԵԶ ԽԵՂԴՎՈՒՄ Է ՃԱՅՆԸ:

Խսահակյանը ծշմարտության հարցը քննում է ոչ միայն ինացարանական, այլև բարոյականության տեսանկյունից: Նա հուշում է, որ զգացմունքայինը ևս

⁸ Ավ. Խսահակյան, հ.4. էջ 224:

ճշմարտությունը պահպանելու կարևոր պայման է, որ չպետք է լրի զգացականությունը, զգացմունքայինը: Ի տարբերություն փիլիսոփայական մյուս կատեգորաների՝ ճշմարտությունը խստ հուզական է՝ «Ով սիրտ ունի, նա կիասկանա և տիեզերքը, և կյանքը, և ճշմարտությունը...»⁹, ճշմարտությունը ներառում է մարդկային այնպիսի որակներ, ինչպիսին ազնվությունն է, որը կարծես վերածվում է ճշմարտության գործառույթի, ուստի այդ գործառույթին չպետք է խոչընդոտել:

Ազնվություն-արդարություն փոխառնչությունը ճշմարտության պահպանման հիմնարար արժեքն է դառնում, որը հասարակական հոգեբանության տեսանկյունից դառնում է սոցիալական արդարության երաշխիքը: Նման պայմաններում հասարակության մեջ աճում է հավատը, վստահությունը, մինչդեռ համատարած ստի ու խարեւության պայմաններում հավատն է կորում, անգամ իրար չեն վստահում մտերիմներն ու հարազատները.

Բարեկամն ի՞նչ է – լավիդ նախանձող,

քայլիդ խուզարկու, բամբասող, ագահ:

Հավատի կորուստը կարող է սոցիալ-քաղաքական ծանր հետևանքներ ունենալ:

Իսահակյանը նկատել է, որ ժողովրդի ենթագիտակցության մեջ արդարությունը իրեն ճշմարտության ի հայտ գալու հոնանիշ արտահայտվում է աստվածային արդար հատուցում արտահայտությամբ և «Ուստա Կարո» վեպում հետևյալ պարբերության մեջ ճշմարտության հարաբերական լինելու գաղափարի հետ զուգակցված ցույց է տալիս, որ «Իին սերունդը ռուսի հաղթանակն էր տեսնչում, նոր սերունդը՝ պարտությունը. թեև, առհասարակ, ամենքի համար էլ ռուսի պարտությունը աստվածային արդար հատուցման նշանն էր՝ հայերի հանդեա գործած ցարի անհրավությունների»¹⁰: Իսահակյանը հասարակության ոլորտում կոնկրետ օրինակներով ցույց է տվել, որ ստի հավատալու, այն ամբողջական դարձնելու համար մեկ-երկու ճշմարտություններ են «նետում», «գցում» նրա մեջ կամ էլ ստի մեջ մի փոքր ճշմարտություն են ներարկում և սուտը արագ տարածվում է հատկապես ոյուրահավատների լայն զանգված ունենալու պարագայում: Նման մասսա ցավիք ծևավորվում է, որը արագ տարածում է սուտը և հասարակական կարծիքն էլ երբեմն հենվում է ստի վրա, «բայց քաղաքիս մեջ համբավ էլ ընկել ու մինչի օրս էլ շատերը սխալմունքով կպնդեն, թե ես եմ նամեստնիկի աչքերը բռնել ու հարցում արել: Ես ասել եմ ու միշտ էլ կասեն, որ ես բանը բոլորովին սխալ է, սուտ է... Բայց շիտակն էն է, որ նամեստնիկը բռնեց աչքերս ու էդ հարցումն արավ: Ես սուտը չեմ սիրեն, ամեն ինչի մեջ ճշմարտությունը լավ բան է»¹¹: Իսահակյանը փորձում է վեր հանել ստի արմատներն ու պատճառները և նկատում, որ սուտը հանդես է գալիս այն դեպքում, երբ սուրբեկտը, որը պատասխանատվություն է ստանձնել և գործի նկատմամբ ցուցաբերել է անկարողություն, ապա իր մեղավորությունը թաքցնելու համար դիմում է խարեւության ու ստի «... վագիր-նազիր,... շան կծուկ մինհաստիներ, էն անի-

⁹ Ավ. Իսահակյան, Քիշատակարան, էջ 212:

¹⁰ Ավ. Իսահակյան, հ. 4, էջ 354:

¹¹ Ավ. Իսահակյան, հ.4, էջ 416:

ծածներն են մեղավոր, որ բանը սուտ տեղ կհասցնեն,...»¹²:

Սուտը հանդես է գալիս նաև կոնֆլիկտային իրավիճակներում, քաղաքական տարրեր ուժերի և անձանց բախումների ժամանակ: Սոցիալ- քաղաքական պայմանների ազդեցությամբ մշակվում է բնագդ միտված դեպի սուտը:

Իսահակյանը հակված է կարծելու, որ արվեստը կոչված է ճշմարտություններ հայտնաբերելու, ուստի նշում է. «Արվեստը ավելի ճշմարիտ է, քան իրականությունը, որովհետև նա ստեղծված է բանաստեղծի հոգու մեջ»¹³: Արվեստագետի երևակայությամբ ստեղծած իրականությունը կատարյալ է, ուստի այն ճշմարիտ է և գեղեցիկ: Իսահակյանը դավանում է ճշմարիտը, բարին և գեղեցիկը, կարգախոսին ու «Սոկրատեսը» բանաստեղծության մեջ նշում՝

**Նա փոխարեն օրենքներին մարդադավ՝
Բարձրացրեց իմաստության կատարին-
Խղճի ձայնը, ազատ միտքը, սերն անդավ,
Գեղեցիկը, ճշմարիտը և բարին:**

Ճշմարիտը գեղեցիկի տեսանկյունից ընկալելու հարցում նա արտաքին աշխարհը համադրում է մարդկային ներաշխարհի հետ և նկատում, որ արտաքին աշխարհը միշտ էլ թերի է, անկատար, ավելի կոնկրետ «նսեն պատկերը ներաշխարհի»: Միաժամանակ նկատում է, որ ճշմարտության գերազանահատումը արվեստում, ի հաշիվ իրականության հետ բացարձակ համեմատության, կարող է արվեստը խեղաթյուրելու առիթ հանդիսանալ և «Ֆարիհի Սուլթան Մահմեդ» գործում նկարագրում է հետևյալը. հոչակավոր նկարիչը ցուցադրում էր սուլթանին իր կտավներից մեկը, որի վրա նկարել էր Յովիաննես Մկրտչի կտրած գլուխը: Սուլթանը՝ գովելով նկարի գույների ներդաշնակությունը, նկատում է «սակայն պարանոցի այս կտորը միսը, որ դեռ նկատվում է կտրած գլխի վրա, իրականին չի համապատասխանում»¹⁴: Սուլթանը բացատրելով երևույթի ֆիզիոլոգիական կողմը և նկատելով նկարչի տարակուսանքը, իր կենսակիրծի ճշմարտությունը ապացուցելու նպատակով հրամայում է, և պահակը «... սրի մի հարվածով թոցրեց ստրուկի գլուխը՝ ներկաների սարսափած աչքերի առջև»¹⁵:

Մեծ հումանիստ Իսահակյանը, ինչև, դեմ է նման ձևով ճշմարտության ապացուցմանը, պարզաբն մի օրինակով ցույց է տալիս, որ ճշմարտության ու իրականության համընկնումը նման գրեթեիկ ձևով կարող է ողբերգական ավարտ ունենալ: Մինչդեռ նա հակված էր այն բանին, որ բոլոր կատարելությունները հետապնդում են մեկ նապատակ. ունենալ կատարյալ մարդ: Յասարակական բոլոր իդեալները պետք է պտտվեն մարդկային բարոյական և գեղագիտական իդեալների շուրջ, քանզի բոլոր կարգի մարդկային իդեալների հիմքում ընկած են բարու և գեղեցիկի իդեալները: Քին հունական փիլիսոփայությունից սերմանած այդ սկզբունքը հսահակյանի մոտ դառնում է դավանանք՝ «ճշմարտությունը, եթե գեղեցիկ չէ, նա ճշմարտություն չէ, իսկ ինչ որ գեղեցիկ է, նա ճշմարիտ է»¹⁶: Նա հս-

¹² Ավ. Իսահակյան, հ.4, էջ 356:

¹³ Ավ. Իսահակյան, Աֆորիզմներ, Երևան, 2001, էջ 193:

¹⁴ Ավ. Իսահակյան, հ.3, էջ 339:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Ավ. Իսահակյան, Աֆորիզմներ, էջ 324:

տակեցնում է նաև ճշմարիտի և գեղեցիկի կիրառման ոլորտը, որը ամենալայնն է, դա կյանքն է, բարոյականությունը, հասարակական հարաբերությունները և նշում է, որ պետք է «... ապրել գեղեցիկ, մտածել, զգալ գեղեցիկ,... մեռնել գեղեցիկ... Ամեն բան գեղեցիկ, գեղեցիկ... »¹⁷: Հասարակական – քաղաքական բարդ իրադրությունների մեջ ապրած, կուսակցական զգվարտոցի ականատես, մարդկանց և մասնավորապես իշխանավորների վարքն ու բարքը ուսումնասիրած և հասարակական հարաբերությունների ոլորտում ճշմարտություն փնտրող բանաստեղծը հանգում է ճշմարտության մի ինքնատիպ, յուրահատուկ, խորիմաստ և ինչ- որ իմաստով նաև պարադրսալ ձևակերպման՝ «բոլոր ճշմարտությունները սուստ են, սուստն է միայն ճշմարտությունը»¹⁸: Սուստը ներկայացնել որպես ճշմարտություն՝ հնարավոր է բացառապես հղկված ճարպկությամբ կամ էլ սուստը դաշնում է վտանգավոր, քանի որ այն դաշնում է մտածելակերպ, աշխատառ, անգամ հասարակության կառավարման մերոդ: Ստի և ճշմարտության ննան փոխակերպումներով մտահոգված հսահակյանը 1927թ. մարտի 8-ին տիկնոջը գրած նամակում նշում է, որ ծիշտ չեն այն պնդումները, թե Հայաստանը արքայություն է և նման մոտեցումը համարում է սխալ մեթոդ, որով մարդիկ խարում են և իրենց, և նյուսներին, որի հետևանքները լինում են ծանր: Համեմատություն կատարելով, նշում է, որ վերքերը ծածկելով չեն բուժում հիվանդությունը, իսկ Հայաստանը վերքերով ծածկված է և բուժվելու կարիք է զգում: Նա ամենամեծ վտանգը տեսնում է նրանում, որ սուստը սկսում են սիրել, իսկ խորհրդային զաղափարախոսությունը նպաստում էր կամ էլ ուղղակի միտված էր դրան. «Սուստը՝ իրական Հայաստանը խեղծ է, աղքատ է, փոքր, մենք սիրում ենք – սուստը, սուստ Հայաստանը, որ նա ծաղկում է, ջրանցքներ ունի, հիդրոկայաններ, ֆաբրիկաներ, հզոր է, բարձրանում է, հոբելյաններ է կատարում, պետություն է... մեր ուղածն ենք տեսնում և այն սիրում, և սուստը ընդունում ենք որպես ճշմարտություն»¹⁹: Ավելի վտանգավոր է հատկապես հասարակական-քաղաքական ոլորտում և միջավետական հարաբերություններում ստիճան երկրպագելը, որը տանում է իրականության խեղաթյուրման, ճակատագրական է դաշնում անհատի, ազգի, պետականության համար և այս տեսանկյունից որպես ակնառու օրինակ՝ վերլուծում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, նշելով՝ «Լեռնային Ղարաբաղի ավտոնոմիան բացարձակ սուստ բան է, նա Բաքվին ենթարկված մի բան է: Աղբեջանն է իշխում ամեն բանի մեջ: ... Ստեփանակերտ, իլու- հպատակ, ձևական ավտոնոմիա, ֆիկցիա, իրավագուրկ գրեթե, ինքնավար չէ բնավ, ամեն բանի մեջ, ամենաչնչին բանի մեջ ենթարկվող Բաքվին... »²⁰: Իսահակյանը ելնում է այն սկզբունքից, որ պետք է ասել ամբողջ ճշմարտությունը, լրիվ կերպով կամ ոչ թե կես ճշմարտությունը: Երբ ասվում է կես ճշմարտություն, ապա գործում է հետևյալ կարգախոսը. կես ճշմարտություն- կես սուստ: Այս դեպքում սուստը համերաշխ է դաշնում թե առանձին անհատների և թե հասարակական խմբերի ու

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Ավ. Խսահակյան, Աֆորիզմներ, էջ 197:

¹⁹ Նույն տեղում, էջ 56:

²⁰ Նույն տեղում, էջ 182:

խավերի բարոյահոգեբանական խառնվածքի հետ: Խսահակյանը զգացել է նաև ծշմարտության չափորոշչի կարիքը և օգտագործել է անգամ «արշին» հասկացությունը: Նկատելով նման չափանիշի դժվարության հետ կապված խնդիրները և տարբեր ոլորտներում միևնույն չափանիշի կիրառման ոչ միարժեքությունը, նա ձևակերպում է հետևյալ մոտեցումը. «Կրիտերիում- չափ, արշին, իմ ծշմարտության կրիտերիումը- օգտակարությունն է, ուտիլիտարիզմը»²¹: Նման տեսանկյունից ծշմարիտ են այն գիտելիքները, որոնք բավարարում են մարդկանց պրակտիկ պահանջմունքները: Եթե ծշմարտությունը դիտարկվում է գիտելիքի պրակտիկ օգտակարության, արդյունավետության և գործնականության տեսանկյունից, ապա այդպիսի ուսմունք նշակված է պրագմատիստական փիլիսոփայության կողմից: Այդպիսին է նաև ծշմարտության մարքսիստական ուսմունքը, որը ներմուծում է նաև հասարակական-պատմական պրակտիկա հասկացությունը: Այս ուսմունքները որոշ իմաստով խոցելի են այն առումով, որ գիտական բազմաթիվ ծշմարտություններ կարող են օգտակար չլինել գործարարության և շահի տեսանկյունից կամ շուտով կկորցնեն այդ ընդունակությունները: Մարդի հետապնդում է բազմաթիվ, նույնիսկ հակադիր նպատակներ, ուստի դրանց հասնելու համար իմացությունը չի տեղափոխվում ծշմարտության մեկ չափանիշի շրջանակներում: Ննան մոտեցման թերությունը ոչ թե այն է, որ ընդգծվում է ծշմարտության սուբյեկտիվ, մարդկային կողմը, այլ այն, որ օգտակարության չափանիշը տարածվում է նաև այնպիսի արժեքների վրա, որոնք իրականում ծշմարտության չափմանը ենթակա չեն, այլ կերպ ասած՝ ծշմարտության բնորոշումը իրեն նպատակին հասնելու միջոցի կամ գործիքի սահմանափակված է և չի կարող տարածվել բարոյական արժեքների կամ պնդումների վրա: Ծշմարիտի, օգտակարի և գեղեցիկի փոխարարերությունը խախտվում է, եթե օգտակարի գերազանցահատումը բացարձակեցվում է, և Խսահակյանը իրավացիորեն օգտվում է ծշմարտության տարբեր չափանիշներից, որոնք փոխլրացնում են միմյանց, գրելով՝ «...կրիտերիումը երաժշտության մեջ իմ զգալն է, իմ ազդվելն է, իմ ապրելն է»²²: Անշուշտ արվեստում միայն օգտակարը չի կարող լինել ծշմարտության գլխավոր ու միակ չափանիշը, այս պարագայում ապրումը, զգալը, ոգևորվելը դրւս է մնում տեսադաշտից: Իր «Փիլիսոփայությունը ստեղծագործության գաղտնիքների որոնումներում» աշխատության մեջ պրոֆեսոր Դր. Շաքարյանը նկատել է, որ «Արվեստում ժամանակի հավաքական ուժընը պակաս ամբողջական չի ներկայացվում, քան, օրինակ, փիլիսոփայական տրակտատներում: Մի ամբողջ դարաշրջան է ամփոփված «Պատերազմ և խաղաղություն» վեպի էջերում, և նրա հեղինակը նույնքան հանճարեղ կերպով կնկատեր, թե որքան էլ պարագայ հնչի, գեղարվեստական խոսքն ավելի մեծ ստույգություն է պահանջում, քան գիտությունը»²³:

Անընդունելի է այն բանաձևը, որ՝ «օգտակար է, հետևաբար ծշմարիտ է»: Այն բանից, որ յուրաքանչյուր ծշմարտություն օգտակար է, երբեք էլ միաժամանակ

²¹ Նույն տեղում, էջ 291:

²² Նույն տեղում:

²³ Դր. Գ. Շաքարյան, Փիլիսոփայությունը ստեղծագործության գաղտնիքների որոնումներում, Երևան, 2002, էջ 115:

չի հետևում, որ ամեն մի օգտակար ծշմարիտ է: Այս դեպքում ծշմարտությունը կարող է մատուցել կեղծիքին հավասար ծառայություն և դեռ ավելին՝ կեղծիքը քողարկել: Եշմարտության հարցի նկատմամբ Իսահակյանին ամբողջովին հասկանալու, ընթանելու համար վկայակորչում ենք հիշատակարանային հետևյալ գրառումը. «Ուզում եմ ձրի առնել, որ անկախ ասեմ այն, ինչ որ ծշմարիտ է և օգտակար տանջվածներին, ձրի եմ ուզում, որովհետև այդ պայմանի մեջ ես ինձ բարձր կզգամ և կոչումիս համար.- ես չեմ ուզում, ծախել ծշմարտություններ, որոնք գիտությունը դարերից սկսած ծեռք է բերել՝ ուրիշների քրտինքով»²⁴: Իսահակյանը նկատել է, որ մարդիկ, հավասարապես տանջվածներն ու զրկվածները, մշտապես քաղց են զգում ծշմարտության և ծշմարտությունը ասողների հանդեպ, որ յուրաքանչյուր ոք ծշմարտության մասին իր սեփական պատկերացումը ունենալով հանդերձ, կամենում է համախոհներ կամ դաշնակիցներ այդ հարցում ունենալ: Այս առումով նա հակվում է ծշմարտության օրյեկտիվության ու կոնկրետության գաղափարին: Իսահակյանը ծշմարտության մասին հատուկ տեսություն չի ստեղծում, նրա խստ իմացարանական հարցերով չի զբաղվում, բայց իր ստեղծագործություններում առավելապես իմացարանական ծագում ունեցող կատեգորիային տալիս է ընդգծված արժեքային երանգավորում: Նա հաստատում և ընդգծում է այն միտքը, որ ծշմարտությունը մեծագույն արժեք է մարդու կողմից ստեղծած արժեքներում, միաժամանակ և իր ստեղծագործություններում, և իր մարդկային կեցվածքով համոզում է, որ իմացարանականն ու արժեքայինը բոլորովին էլ, կամ միշտ չէ, որ իրար օտար կարող են գտնվել: Այս ամենը նրան հաջողվում է, քանի ու «Իսահակյանի անհատականությունը, նրա մտածելակերպը և այս ամենի արգասիք նրա ստացագործությունը հաստատում են այն ծշմարտությունը, որ հաճինս Իսահակյանի՝ մենք գործ ունենք ոչ միայն մեծ բանաստեղծի, այլև մեծ փիլիսոփայի հետ»²⁵:

Դեկարտյան դարաշրջանում սոսկ իբրև իմացարանական երևույթ դիտարկվող ռացիոնալը վաղուց արդեն ստացել է արժեքային-բովանդակային նշանակություն: Տույնքան փոխակերպություն է ապրում նույնիսկ իմացարանության համար Ելակետային նշանակություն ունեցող ծշմարտություն կատեգորիալ հասկացությունը, և ազգային-քննական լեզուներն անգամ դժվարանում են համակերպվել նման իմաստափոխություններին: Պրոֆեսոր Յր. Շաքարյանը գտնում է. «Ուսերենում իմացարանական իստիհա-ի կողքին վաղուց հայտնվել է նրա արժեքային համարժեքը՝ ուրաքանչափ պրավական այլ լեզուներում դժվարությանը է գտնում իր համագոյակը... Յայերենում միևնույն ծշմարտություն իր մեջ հավասարապես ներառում է և իմացարանական իստիհա-ն, և արժեքային ուրաքանչափ թերևս սա էլ մեր ազգային մենատալի հայտնի արդյունք է. ավանդաբար իմացարանական ծշմարտությունը դիտարկվել է իբրև բարոյականի, արդարամտության նախապայման»: Այս առումնով ուսուցանող է Խահակյանի կողմից ծշմարտության իմացարանական կատեգորիային բարոյաարժեքային տեսանկյունից մոտենալը, և պատճական ընթացքը ապացուցեց դրա իրավագիությունը: Ղարաբաղյան բախումների առաջին օրերին հայերը ավելի քան ապավինում էին իհն

²⁴ Ապ. Իսահակյան, Յիշատակարան, էջ 71:

²⁵ Այիկ Իսահակյան, Բարեկամությունը և պատմությունը, Երևան, 2008, էջ 262:

ժամանակների պատմամշակութային հուշածաններին, այսինքն՝ արժեքայինը, շահեկանը իմացարանականի, ճշմարտության մեջ էին փնտրում, իսկ ազերիները փորձում էին ճշմարտություն հորինել՝ իմացարանականը նենգափոխելով արժեքայինի:

ОЦЕНКА ИСТИНЫ В ЛИТЕРАТУРНОМ НАСЛЕДИИ А. ИСААКЯНА

Г. Г. КАДЖОЯН

Статья посвящена выявлению и оценке философского понятия истины посредством анализа и осмыслиения литературного наследия знаменитого армянского поэта Аветика Исаакяна.

APPRECIATION OF TRUTH IN THE LITERARY HERITAGE OF AVETIK ISAHAKYAN

Н. Г. ГХАОՅԱՆ

The article is about the reveal and appreciation of “truth” as a philosophical concept through the analysis and comprehension of the literary heritage of the famous Armenian poet Avetik Isahakyan.

ՅԻՆԴՈՒԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԿՎԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ. ՎԵԴԱՅԱԿԱՆ ԿՐՈՆ

Պ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Փիլ. գիտ. թեկն., դոցենտ

Յինդուզմը (սանսկրիտ.՝ սամատանա դհարմա) աշխարհի ամենահին և ազդեցիկ կրոններից է: Այս կրոնի անվանումն առաջացել է ինդոս գետի ղեռևս Ավեստայում փաստված *Մինդհու* իրանական անվանումից, որը հետագայում դարձել է ոչ միայն երկրի անվանում, այլև այն բնակեցրած ժողովուրդների ընդհանրական անուն:

Իբրև կրոնական ֆենոմեն՝ իինդուզմը առանձնանում է բարդությամբ և հակասականությամբ, խճվածությամբ ու քառայնությամբ: Պատմամշակութային լուրջ խնդիր է նույնիսկ «իինդուիզմ» տերմինի սահմանումը¹: Մինչ օրս չկա բավարար սահմանում և նույնիսկ բացատրություն այն հարցին, թե ինչը պետք է համարել իինդուիզմ, ինչպիսին են այդ հասկացության էությունը և սահմանները: Իր պատմության մի քանի հազարամյակների ընթացքում իինդուիզմը ձևավորվել է իր կրոնափիլիսոփայական ուսմունքների և դիցարանական

¹ Յինդուիզմ տերմինի և իինդուիզմի այլ իիմնահարցերի քննական վերլուծությունը տես՝ Ալեքսանդր Ա. Փ. Իндусизм. Главная религия Индии, СПб. 2006, с. 8-27.